Արձանագրություն N 4

ՄԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/5 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Մարալիկ

01 ապրիլի 2019թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝	Գոհար Սահինյան
Հանձնաժողովի Գնահատող անդամներ՝	Մերրի Դարբինյան , Օսաննա Գևորգյան
Բացող անդամներ՝	Լևոն Եգանյան , Ռուզաննա Եղոյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Էդվարդ Գրիգորյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը

(Գ. Սահինյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին,
3. Մերժված հայտերի մասին,
4. Չկայացած չափաբաժինները հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին

(Գ. Սահինյան)

Ընդունել ի գիտություն, որ մարտի 29-ին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է եզրակացության առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Համաձայն վերը նշված եզրակացության առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 4000 ՀՀ դրամի չափով, ինչը գերազանցում է Հրավերի 2-րդ մասի 2.1 կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետանց պարտավորությունների չափը:

ՄԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/5 ծածկագրով էլեկտրոնային գնումների էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի Առաջին

տեղը զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում հանձնաժողովին է ներկայացվել սույն ընթացակարգին իր՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով սահմանված ժամկտում հանձնաժողովին ներկայացված սույն ընթացակարգին իր՝ որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները), համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0

3. <u>Մերժված հայտերի մասին</u>

(Գ. Սահինյան)

Հիմք ընդունելով 04 մայիսի 2017թ.-ի 526-Ն Որոշման կարգի 44-րդ կետը, Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել Անալիզ-Մեդ ՍՊԸ -ի հայտը :

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: 04 մայիսի 2017թ.-ի 526-Ն Որոշման կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Չկայացած չափաբաժինները հաստատելու մասին,

(Գ. Սահինյան)

<<Գնումների մասին>> << օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ 2,3,4,7,8,13,21,22,23,24,25,26,32,33,34,35,36,37,38,39,40,41,42,43,44,45-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ պայմանագիր չի կնքվում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Գոհար Սահինյան

Գնահատող անդամներ՝ Մերրի Դարբինյան

Օսաննա Գևորգյան

Բացող անդամներ՝ Լևոն Եգանյան

Ռուզաննա Եղոյան

Քարտուղար՝ Էդվարդ Գրիգորյան

ProTender©
www.protender.am